

Ն. Մ Ա Ռ.

Պիտանի ընթերցուածք նախնի հայերէն ընդ որում բառարան  
Հայ-Ռուսերէն ի պէտս նորավարժից, Ս. Պետերբուրգ, 1893:

—

Գրաբար լեզուն եւրոպական համալսարաններում դաս տւան-  
գե.իս մինչեւ վերոյիշեալ Ն. Մառի գիրքը երէք շատագրքերով է  
կատարուել. 1) Petermann, Brevis linguae armenicae grammatica,  
litteratura, chrestomatia cum glossario, Lipsiae, 1872. 2) M. Lauer,  
Die armenische grammatik. 3) Carrière-ը թարգմանել է լատէրի  
քերականութիւնը ֆրանսերէն լեզուով, պ. Մառն էլ գրել է իւր  
գիրքը իւր լսողների համար, որոնք Պետերբուրգի համալսարանի  
արեւելեան մասում են լսում: Գիրքը բաղկացած է երկու մասից.  
առաջին մասի մէջ ընթերցանութեան կտորներ են՝ վերցրած մեր  
թէ թարգմանական և թէ ինքնուրոյն հին հեղինակներից, որոնք  
բոլորն էլ արձակ են բացի մի կտորից՝ Ներսէս Շնորհալու «Ողբ  
Եգեսիդ» և Վարդան Մեծի սրբոյն Սարգսի զաւրաւարի Շարա-  
կանից, իսկ երկրորդ մասը բառարան է: Նա ուղղագրութեան  
մէջ պահպանել է այժմ գործածական է- և օ ի տեղ է- և ա-  
հին գրութիւնը, որը թէև ուղիղ է, բայց կարող է լեզուն նոր  
սովորողներին շփոթել, քանի որ մեր գրքերը փոխուած ուղ-  
ղագրութիւն ունին: Պատրաստ ունի նաև «Հին հայերէնի սկզբ-  
նական քերականութիւնը»: Յուսանք որ նա իւր ձեռնարկներով  
գիւրացներով և ուս ուսանողների գործը կարող է պատճառ դառ-  
նալ, որ նոցանից շատերը սովորեն հայերէն քան այդ պատա-  
հում է:

Հ Ա Շ Ի Ի

Գանձակու Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ վասն 1891 և 1892 ամաց,  
Գանձակ, 1893:

—

Աւելորդ է առանձին կերպով շեշտել ցոյց տալու համար՝ թէ  
ինչքան գովելի և միանգամայն հետևողութիւն գտնելու արժա-

նի քայլ է Գանձակի ու Յուլհաննէս Մ. եկեղ. երեցփօխի վարժաւորը. մենք այստեղ կը բաւականանք առաջ բերելով հաշուեգրքից գլխաւոր գումարները: Եկեղեցու առաջի 1889 և 1890 թ. առաջին հաշուեգրութիւնից երեւացել է որ նա 1891 թ. Յունվարի 1 ն ունեցել է 27,034 ռ. 86 կ. իսկ մի տարուց յետոյ այն է 1892 թ. Յունվարի 1-ն մայր գումար եղել է 26,248 ռ. 59 կ., ասել է նախընթաց տարու հետ համեմատած մայր գումարից պակասել է 786 ռ. 27 կ., իսկ 1892 թ. վերջին ներկայացրած է մուտք 42,103 ռ. 42 կ. նոյնքան էլ ծախք և իբրև ստանալիք 1893 թ. Յունվարի 1-ն մնում է 35,097 ռ. 21 կ. եկեղեցւոյ գումարը ծախուում է ամենից առաջ եկեղ. դպրոցների համար 2,926 ռ., գիմնադիոնի կրօնօւսոյցին 300 ռ., առաջնորդարանին 560 ռ., կալուածքների ծախք 512 ռ. իսկ միւս ծախքերը փոքր են:

#### ДРЕВНОСТИ ВОСТОЧНЫЯ.

Труды восточной комисіи Импер. Моск. Археол. общества, издание подь редакціей М. В. Никольскаго т. I. Москва. 1893.

Այս գեղեցիկ և հետաքրքիր հրատարակութիւնը խմբագրութիւնս ստացել է շնորհակալութեամբ. պ. Յ. Յուլհաննիսեանի ձեռքով: Նորա մէջ կան հետևեալ շարադրութիւնները. 1. Ирано-финскія лексикальныя отношенія члена корреспондента р. р. шкапельберга էջ 283—298. 2. Источники по введенію христіанства въ Грузіи члена корреспондента А. С. Хаханаго. էջ 299—345. 3. О четырехъ обязанностяхъ дервиша, члена-корреспондента М. С. Щекіна էջ 345—352. 4. О двухъ ассирійскихъ фрагментахъ князя П. А. Путятіна. Дѣйств. чл. М. В. Никольскаго. 5. Десятый международный сѣздъ ориенталистовъ въ Лондонѣ. сентябрь 1891 года. Дѣйств. чл. С. С. Слудскаго. Այս յօդուածը զբաղւում է ոչ միայն վերջին հինգերորդ Ժողովի գործունէութեան նկարագրութեամբ, այլ տալիս է նաև նախկին Ժողովների համաժողով և ամբիօփ պատմութիւնը, ուստի արժէ ամբողջապէս